

Հաստատված է
ԵՄԽՀ-ի գիտական խորհրդի
„_____” 20 թ, նիստ _N____
Գիտխորհրդի նախագահ՝ Ա.Ս.Աղաբաբյան
„_____” 20 թ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ԴԱՍՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը սահմանում է ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:
- 1.2 Ուսանողական հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և համալսարանի կանոնադրական պահանջների հիման վրա և համարվում է ԵՄԽՀ ուսանողության՝ ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:
- 1.3 Ուսանողական հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարում է համալսարանի գիտական խորհուրդը:

2. Ուսանողական հարցման անցկացումը

- 2.1 Առկա ուսուցման համակարգում ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո սեպտեմբեր-հոկտեմբեր, փետրվար-մարտ ամիսներին, հեռակա ուսուցման համակարգում՝ նախորդ ուստարվա տվյալների հիման վրա՝ նոյեմբեր ամսին: Բակալավրիատի ավարտական կուրսում 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև ամփոփիչ ատեստավորման սկիզբը:
- 2.2 Ուսանողական հարցումն իրականացվում է համալսարանի ուսումնամեթոդական բաժնի կողմից:
- 2.3 Ուսանողական հարցումն իրականացվում է սույն կանոնակարգին կից գնահատման թերթիկով, որում ուսանողը 5 միավորից բաղկացած սանդղակով գնահատում է առաջադրված հարցերը:
- 2.4 Գնահատման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր դասընթացի/դասախոսի/ համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով և միջին քառակուսային շեղումով, որտեղ միջին թվաբանականը արտացոլում է միջին խմբային արձագանքը, իսկ միջին քառակուսային շեղումը՝ խմբի ներսում (գնահատման մասնակիցների միջև) փոխհամաձայնության աստիճանը:
- 2.5 Հարցաթերթն ունի նաև տեղեկատվության հատված, որի հարցերը յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում են ռեկտորի կողմից:
- 2.6 Ուսանողական հարցումն անանուն է :
- 2.7 Ուսանողական հարցումն անց է կացվում նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն՝ դասաժամերին ուսանողների առնվազն 50% մասնակցության պայմաններում: Հարցման չկայանալու դեպքում դեկանատը պարտավոր է հաջորդ աշխատանքային 3 օրվա ընթացքում կազմակերպել նոր հարցում:
- 2.8 Հարցումից հետո հարցաթերթերը կնքվում են դեկանատի, ուսումնամեթոդական բաժնի, իսկ մշակումից հետո տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի կնիքներով:

3. Ուսանողական հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

- 3.1 Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են ՏՏԿՀ կենտրոնում:

3.2 Հարցաթերթիկներում կատարված ջնջումները և ուղղումները չեն հաշվարկվում:

3.3 Ուսանողական հարցման արդյունքները 5 տարի պահվում են դեկանատում կամ ուսումնամեթոդական բաժնում, իսկ գնահատված հարցաթերթիկները 3 տարի՝ դեկանատներում:

4. Ուսանողական հարցման արդյունքների օգտագործումը

4.1 Ուսումնամեթոդական բաժինը ուսանողական հարցման արդյունքները համապատասխան ձևաչափերով նայեմբերին և ապրիլին ներկայացնում է ֆակուլտետի դեկանին, իսկ վերջինս 3 օրվա ընթացքում դրանք տրամադրում է համապատասխան ամբիոններին:

4.2 Ուսանողական հարցման արդյունքները ստանալուց հետո 2 շաբաթվա ընթացքում ամբիոնի վարիչը, հատուկ այդ նպատակով հրավիրած ամբիոնի նիստում կազմակերպում է դրանց քննարկումը, որին կարող է մասնակցել նաև ֆակուլտետի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը: Հարցման արդյունքները քննարկվում են նաև ֆակուլտետի խորհրդում: Հարցը ներկայացնում է ֆակուլտետի խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովը: Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են դեկանատի նիստում: Քննարկման արդյունքները մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

4.3 Ֆակուլտետի դեկանը պարտավոր է կազմակերպել հարցման արդյունքների քննարկում դասախոսների և ուսանողների շրջանում՝ մեկ ամսվա ընթացքում:

4.4 Ուսանողական հարցման անհատական արդյունքները հրապարակվում են միայն տվյալ ֆակուլտետում:

4.5 Դասախոսն իրավունք ունի ծանոթանալու հարցման՝ իրեն վերաբերվող գրավոր կարծիքներին:

4.6 Ուսանողական հարցման արդյունքում ստացված գնահատումների ու դասավանդման բարելավման միջոցառումների ծրագրի կատարողականի արդյունքներն օգտագործվում են դասախոսական կազմի՝

- տարեկան հաշվետվությունների ընդունման,
- գործունեության բազմաչափ գնահատման,
- պաշտոնում ընտրման կամ առաջխաղացման,
- աշխատանքային պայմանագրի երկարացման կամ լուծման,

- նյութական խրախուսման,
- համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործընթացներում:

Հարցաթերթ

Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում ուսուցման /դասավանդման/ որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման

Հարգելի ուսանող, Դուք մասնակցում եք Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի դասավանդման որակի և արդյունավետության հարցման: Հարցման արդյունքները արդյունքները համալսարանի ղեկավարությանը հնարավորություն կտան ձեռնարկել միջոցներ՝ ուղղված կրթության որակի հետագա բարձրացմանը: Խնդրում ենք որքան հնարավոր է անկեղծ արտահայտել Ձեր կարծիքը: Հարցումը իրականացվում է անանուն և ստացված տեղեկատվությունը կօգտագործվի ընդհանրացված տեսքով:

1. Ըստ Ձեզ որքանով է ԵՄԽՀ-ի կրթական ծրագրերի բովանդակությունը համապատասխանում աշխատաշուկայում մասնագետին ներկայացվող պահանջներին:

- Համապատասխանում է ամբողջովին
- Համապատասխանում է մասամբ
- Չի համապատասխանում
- Դժվարանում եմ պատասխանել

2. Որքանով է մասնագիտական դասընթացների բովանդակությունը համապատասխանում կրթական ծրագրերի պահանջներին:

- Համապատասխանում է ամբողջովին
- Համապատասխանում է մասամբ
- Չի համապատասխանում
- Դժվարանում եմ պատասխանել

3. Խնդրում ենք կատարել իրականացվող մասնագիտական դասընթացների առանձին բաղադրիչների ընդհանրական գնահատում:

	Դասընթացի բաղադրիչի նկարագիրը	գերազանց	լավ	բավարար	անբավարար	դժվարանում եմ գնահատել
1.	Մասնագիտական դասընթացներում Ձեր ստացած տեսական գիտելիքների մակարդակը					
2.	Մասնագիտական					

	դասընթացներում Ձեր կողմից ձեռք բերված գործնական կարողությունների և հմտությունների մակարդակը					
--	---	--	--	--	--	--

4. Որքանո՞վ են բուհում դասավանդամուր նպաստում Ձեր՝ որպես մասնագետի ձևավորմանը:

- Նպաստում են էականորեն
- Նպաստում են մասամբ
- Չեն նպաստում
- Դժվարանում եմ պատասխանել

5. Համաձայն եք Ձեզ առաջարկվող մասնագիտական կրթական ծրագրերում ոչ մասնագիտական առարկաներին հատկացված ժամաքանակի հետ:

- Այո, ոչ մասնագիտական առարկաներին հատկացվել է բավարար ժամաքանակ:
- Ոչ, հատկացվել է ավելի շատ քան անհրաժեշտ է:
- Ոչ, հատկացվել է ավելի քիչ քան անհրաժեշտ է:
- Ոչ, ըստ իս ոչ մասնագիտական առարկաներն ընդհանրապես պետք է հանել կրթական ծրագրերից:
- Այլ

6. Խնդրում ենք կատարել իրականացվող ընդհանուր՝ ոչ մասնագիտական դասընթացների առանձին բաղադրիչների ընդհանրական գնահատում:

	Դասընթացի բաղադրիչի նկարագիրը	գերազանց	լավ	բավարար	անբավարար	դժվարանում եմ գնահատել
1.	Այս դասընթացում Ձեր ստացած տեսական գիտելիքների մակարդակը					

2.	Այս դասընթացում Ձեր կողմից ձեռք բերված գործնական կարողությունների և հմտությունների մակարդակը					
----	--	--	--	--	--	--

7. Որքանո՞վ են ոչ մասնագիտական դասընթացները նպաստում Ձեր ընդհանուր զարգացմանը:

- Նպաստում են էականորեն
- Նպաստում են մասամբ
- Չեն նպաստում
- Դժվարանում եմ պատասխանել

8. Դուք վստահու՞մ եք Ձեզ դասավանդող դասախոսների գիտելիքներին և մասնագիտական փորձին:

- Այո, վստահում եմ ամբողջովին
- Վստահում եմ մասամբ
- Չեմ վստահում
- Դժվարանում եմ պատասխանել

9. Ձեր կարծիքով համալսարանում ստացած գիտելիքները բավարա՞ր են համալսարանն ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ ըստ մասնագիտության աշխատանքի անցնելու համար:

- Այո, իմ ստացած գիտելիքները լիովին բավարար են համապատասխան գործատուի մոտ աշխատանքի անցնելու համար:
- Այո, գիտելիքներս կբավարարեն, սակայն որակյալ աշխատող դառնալու համար անհրաժեշտ է ձեռք բերել որոշակի աշխատանքային փորձ:
- Համապատասխան գործատուի մոտ աշխատելու համար լրացուցիչ վերապատրաստման անհրաժեշտություն կզգացվի:
- Դժվարանում եմ պատասխանել:

Այլ

10. Ինչպե՞ս

Եք գնահատում Ձեր ստացած կրթության որակի և ուսման վարձի հարաբերակցությունը:

- Ուսման վարձը համապատասխանում է կրթության որակին:
- Ուսման վարձը կրթության որակի համեմատ բարձր է:
- Ուսման վարձը կրթության որակի համեմատ ցածր է:
- Դժվարանում եմ պատասխանել:

11. Խնդրում ենք կատարել դասավանդման գործընթացի առանձին բաղադրիչների ընդհանրական գնահատում:

	Դասավանդման գործընթացի առանձին բաղադրիչների նկարագիրը	գերազանց	լավ	բավարար	անբավարար	դժվարանում եմ գնահատել
1.	Դասախոսների բանավոր խոսքի և արտասանության որակը					
2.	Դասախոսների կողմից լսարանում կարգապահությունն ապահովելու կարողությունը					
3.	Հարց ու պատասխանի և այլ ինտերակտիվ մեթոդների կիրառումը՝ դասավանդման ընթացքում ուսանողների ներգրավվածությունն ապահովելու համար					
4.	Դասախոսների կողմից դասավանդվող առարկաների նկատմամբ ցուցաբերված ստեղծագործական մոտեցման մակարդակը					
5.	Դասախոսների կողմից առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու մակարդակը					
6.	Դասավանդման ժամանակ դասախոսների կողմից ուսանողների նկատմամբ հարցալից վերաբերմունքը					
7.	Դասընթացների արդյունքում սովորողների պետական մտածելակերպ ձևավորելու և նրանց հայրենասիրության ու մարդասիրության ոգով դաստիարակելու մակարդակը					

12. Ի՞նչ հաճախականությամբ եք օգտվում համալսարանի գրադարանից:

- Հաճախ եմ օգտվում

- Ոչ միշտ եմ օգտվում
 - Չեմ օգտվում, քանի որ գերադասում եմ ձեռք բերել անհրաժեշտ գրականությունը
 - Չեմ օգտվում գրադարանից, քանի որ հույս չունեմ, որ այնտեղ որևէ օգտակար բան կգտնեմ
 - Չեմ օգտվում գրադարանից, քանի որ ինձ լիովին բավարարում են լսածս դասախոսությունները
 - Չեմ օգտվում գրադարանից, քանի որ նյութերը ձեռք եմ բերում էլեկտրոնային տարբերակով
 - Այլ
-

13. Ըստ Ձեզ համալսարանն ապահովում է ուսումնառության ընթացքում անհրաժեշտ գրականության հասանելիությունը

- Այո, լիովին ապահովում է
- Մասամբ ապահովում է
- Բավարար չափով չի ապահովում

14. Համալսարանում առկա՞ են գիտական գործունեությամբ զբաղվելու բավարար պայմաններ

- Այո առկա են
- Առկա են որոշ չափով
- Գիտությամբ զբաղվելու պայմաններ չկան
- Դժվարանում եմ պատասխանել

15. Ձեր կարծիքով, ո՞ր քայլերն են առավել կարևոր համալսարանում կրթության որակի հետագա բարձրացման համար(կարող եք նշել մի քանի պատասխան):

- Համալսարանում տեղեկատվական համակարգի հզորացում
- Կրթական ծրագրերի հետագա լրամշակում և համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին

- Դասավանդման ժամանակակից ինտերակտիվ մեթոդների կիրառում կրթական գործընթացներում
- Գործատուների հետ փոխադարձ կապի հետագա զարգացում
- Համալսարանի գիտական ներուժի հետագա հզորացում
- Համալսարանի շենքային պայմանների հետագա բարելավում
- Դասախոսական կազմի հետագա համալրում առավել կոմպետենտ (գիտակ) մասնագետներով
- Գնահատման համակարգի վերանայում
- Այլ

16. Ի՞նչ ակնկալիքներ ունեք բուհն ավարտելուց հետո:

- Իմ մասնագիտությամբ աշխատանքի անցնել
- Հույս չունեմ, որ մասնագիտությամբս աշխատանք կգտնեմ, սովորում եմ դիպլոմի համար
- Անցնել աշխատանքի այլ մասնագիտությամբ
- Այլ

17. Նշեք Ձեր ֆակուլտետը

- Իրավաբանական
- Տնտեսագիտական
- Ռումանոգերմանական
- Բանասիրական
- Ինֆորմատիկա և Կիրառական մաթեմատիկա (ԷՀՄ ծրագրավորում)
- Դպրոցական մանկավարժություն

18. Նշեք Ձեր ուսուցման ձևը

- Առկա
- Հեռակա

19. Նշեք Ձեր կուրսը

Առաջին

Երկրորդ

Երրորդ

Չորրորդ

20. Առաջարկություններ և մեկնաբանություններ